

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

(Հատուած "Գրիգոր Նարեկացի Բանաստեղծական Արուեստը"
անտիպ ուսումնասիրութիւնից)։

"Լինելութիւն է սկիզբն ապականութեան, եւ ապականութիւն
դարձեալ անդրէն է սկիզբն լինելութեան"։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Բ.- Հաւաստին եւ Հաւանականը Նարեկացու Կեանքի մասին

Համեմատաբար քիչ են Նարեկացու կեանքի մասին տեղեկութիւնները։ Դրանք պայմանականօրէն կարելի է բաժանել երկու խմբի՝ մատենագրական եւ բանահիւսական։ Մատենագրական տեղեկութիւններից կարելի է Նարեկացու վկայութիւնները։ Տեղեկութիւններ կան, թէ եւ շատ սուղ, նաեւ առանձին մատենագիրների երկերում, յիշատակարաններում եւ այլն։ Նարեկացին ինքնակենսագրութիւն չէ թողել։ Ժամանակակիցներից ոչ ոք չի աւանդել գոնէ նրա համառոտ վարքը։

Հայ ժողովուրդը Նարեկացու մասին հիւսել է մի շարք աւանդութիւններ, գրոյցներ, երգեր(1)։ Թէեւ դրանք ունեն հրաշապատում բնոյթ, բայց այդ «աւանդութիւններն ու գրոյցները - ինչպէս գրել է Ա. Ղանալանեանը - գերծ չեն պատմական ատաղձից»(2), եւ ժողովուրդը հաւատարիմ մնալով դարաշրջանի ոգուն՝ «նրան դարձրել է սեփական նուիրական յոյգերի ու ապրումների մարմնացումը, իր երազանքների եւ ակնկալութիւնների իրականացնողը, նրա միջոցով մերկացրել ու դատապարտել է չարիքն ու անարդարութիւնը, հաստատել ու փառաբանել բարին ու արդարը»(3)։

Բանահիւսական այդ աղբիւրները ժողովրդական յիշողութեան ուրոյն վաւե-

րականներ են Նարեկացու մասին։ Առանձին կէտեր կարող են շփման եզրեր ունենալ պատմական փաստերի հետ։ Դրանցից կարելի է արտածել հաւանական, բայց ոչ հաւաստի կենսագրութիւն։ Նարեկացու վարքը, որ ստեղծուել է մատենագրական տուեալների հիման վրայ, յետագայում ընդարձակուել է ժողովրդական աւանդութիւնների հաշուին։ Դա յարիր է վարժագրութեան ժանրին։

Նարեկացու մասին առաջին սեղմ ակնարկը գրել է յայտնի մատենագիր եւ հասարակական-եկեղեցական գործիչ Ներսէս Լամբրոնացին /1153-1198/։ Ակնարկը Լամբրոնացու ինքնագիրն է՝ գրուած 1173 թ. /ՄՄ, ձեռ. նո. 1568, էջ 119 ա-բ / եւ վերնագրուած է այսպէս. «Վարք սրբոյ առնն աստուծոյ Գրիգորի Նարեկացւոյ»։ Վերնագիրը սակայն աստիճանաբար ընդունել է միջնադարի համար պատշաճ տարագ. «Վարք երանելոյն սրբոյ առն աստուծոյ Գրիգորի Նարեկացոյ, զոր արարեալ է սուրբ արքեպիսկոպոսին տէր Ներսէսի՝ առաջնորդի սուրբ ուխտիս Սկեռայի / ՄՄ, ձեռ. նո. 5135, էջ 259p/։

Ի՞նչ կարելի է ասել այս վարքի մասին։ Առաջին, Լամբրոնացին իր տուեալները քաղել է Նարեկացու բուն յիշատակարաններից։ Նրկրորդ, նա իմացել

է, որ Անանիա Նարեկացին եղել է Նարեկավանքի առաջնորդը, Նարեկացու մօր հօրեղբայրը: Նրորորդ, Գրիգոր Եւ Յովհաննէս Նարեկացի եղբայրները սնունդ ու դաստիարակուել են Նարեկավանքում: Զորորդ, Նարեկացին գրել է մեկնութիւն, ներքողներ Եւ Մատեանը՝ բաղկացած 95 գլխից, Եւայլն: Հինգերորդ, Նարեկացին ապրել Եւ ստեղծագործել է Նարեկավանքում՝ բիզանդական Վասիլ 2րդ /976-1025/ Եւ Կոստանդին /976-1028/ կայսրների ժամանակ: Վեցերորդ, Նարեկացին մահացել է այրութեան հասակում:

Փոքր-ինչ անցնշտութիւն կայ Լամբրոնացու այն հաղորդման մէջ, թէ Նարեկացին ապրել է Վահան Սինեցի կաթողիկոսի /968-969/ Եւ Վասպուրականի թագաւոր Սենեքերիմ Արծրունու (1003-1021) ժամանակ: Կաթողիկոսն ու թագաւորը ժամանակակիցներ չեն, ինչպէս նկատուած է բանասիրութեան մէջ(4): ձիշտ չէ նաեւ, թէ իբր Յովհաննէսը մահացած է եղել, Եւ Նարեկացին Մատեանը գրել է նրա մահից յետոյ:

Զնայած այս վրիպումներին, Լամբրոնացու երախայրիքն ունի ուրոյն արժէք: Նախ՝ նա ցանկացել է սրտի խօսք աւել Նարեկացու մասին, որ իր համար բարձրագոյն հեղինակութիւն էր, Եւ ապա յետագայում ոչ մի կենսագիր չի շրջանցել այդ վարքը Եւ, վերջապէս, դա հետաքրքրութիւն է յարուցել գրելու պատմական նշանաւոր անձերի վարքեր(5):

Այս վարքից ծագում է մէկ այլ խմբագրութիւն /ՄՄ, ձեռ. նո. 5135, էջ 259բ-261/, որի հնագոյն օրինակը յայտնի է 1286թ.(6):

Յայտնի փաստերին այստեղ աւելացուել է մէկ փաստ Եւ. Նարեկացու հօր՝ Խոսրով Անճեւացու անունը: Իսկ վարքի Յայսմաւորային տարբերակներում արդէն նշուած է Նաեկացու մահուան տարեթիւը՝ 1003թ(7): Օգտագործուած

են աւանդագրոյցներ, պատմական փաստեր, որոնցից կարեւոր է Սենեքերիմ Արծրունու կողմից Վասպուրականը բիզանդական Վասիլ կայսրին տալու Եւ փոխարէնը Սեբաստիան ստանալու մասին փաստը, Եւ այլն: Վարքի վերջնական խմբագրութիւնը պատկանում է Յարութիւն Աւգերեանի գրչին(8):

Յայտնի չէ Նարեկացու ծննդեան ստոյգ թուականը: Այդ տարեթիւն ընկնում է 940-951թթ. միջեւ: Բացառութիւն է կազմում Յակոբ Նալեանի կարծիքը, որը կարելի էր թիւրիմացութիւն համարել, եթէ դա համոզմունք չլիներ: Ըստ Նալեանի՝ «Ծնաւ սուրբն Գրիգոր ի ԴՃԼԵ /435+551=986/ թուականիս Հայոց, ի ժամանակս Վասիլ Եւ Կոստանդիայ»։ Եւ ապա՝ «որոյ ամբ կենաց հասակին՝ հաւասար փրկչին մերոյ ամաց ԼԳ /33/ յարդարեցան (9):

Գիտական ֆննտրեան առաջին փորձն արել է Միքայէլ Զամչեանը: Ըստ Զամչեանի՝ Նարեկացին «Ծնաւ ի թուին Հայոց իբր Ն /400/, այսինքն է յամի տեառն 951»(10): Նարեկացու ծննդեան այս թուականը Զամչեանը նշել է նաեւ Խոսրով Անճեւացու մասին խօսելիս(11): Զամչեանը մերժում է Նալեանի վարկածը, թէ Նարեկացին մահացել է 30 կամ 33 տարեկան հասակում. «կեանք մորա տեւեաց ոչ պակաս, քան գլխուն ամ»(12):

Գիտական աւելի նիշտ մօտեցում ունի Գաբրիէլ Աւետիքեանը (13): Նա մերժում է 951 թ. Նարեկացու ծնուած լինելու վարկածը: Ըստ Աւետիքեանի՝ Նարեկացին պէտք է ծնուած լինի դրանից առաջ: Որպէս ապացոյց նա յեռնում է Խոսրով Անճեւացու Պատարագի Խորհրդի մեկնութեան յիշատակարանի վրայ, որը գրել է Գրիգոր Նարեկացին: Ցաւօք, յայտնի չէ ընդօրինակութեան տարբերութիւնը: Յիշատակարանում Նարեկացին ասում է, որ իր հօր երկի առաջին «գծագրութիւնը»

արել է իր եղբայր Սահակը «ՅՂԹ քուականութեան Հայոց»՝ այսինքն 950 քուականին: Եւ որովհետեւ Անձեւացին թէ՛ Պատարագի խորհրդի եւ թէ ժամակարգութեան մեկնութիւնները գրել է եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ, նշանակում է՝ Գրիգորը պէտք է ծնուած լինէր այդ քուականից առաջ: Ըստ Աւետիքեանի՝ 943/944թթ.: Այնուհետեւ, գտնելով, որ Երգ Երգոցի մեկնութիւնը Նարեկացին գրել է 977թ. եւ պէտք է լինէր «գերեսամեայ եւ աւելի եւս», իսկ Մատեանն աւարտել է 1002/1003թթ., Աւետիքեանն ընդունում է, որ այդ ժամանակ Նարեկացին պէտք է լինէր վաթսունն անց: Պարզ է, որ այս հաշուարկների համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ Նարեկացու հայրը 950թ. արդէն եպիսկոպոս էր: Սա նշանակում է, որ ոչ միայն մինչ այդ պէտք է ծնուած լինէր Գրիգորը, որ Անձեւացու կրտսեր զաւակն էր, այլեւ այն, որ Նարեկացու մայրը պէտք է արդէն վախճանուած լինէր, որովհետեւ Անձեւացին եպիսկոպոս կարող էր դառնալ կնոջ մահից յետոյ: Դժբախտաբար, ոչ մի յիշատակութիւն չկայ, թէ երբ է մահացել Նարեկացու մայրը: Յայտնի չէ նաեւ նրա անունը:

Արդ, երբ է եպիսկոպոս ձեռնադրուել Անձեւացին: Այս հարցին անդրադարձել է Գալուստ Տէր-Մկրտչեանը(14): Անձեւացուն եպիսկոպոս է ձեռնադրել Ամանիա Մոկացին որը կաթողիկոս է դարձել 941թ.: Եւ որովհետեւ Անձեւացին 950թ. արդէն եպիսկոպոս էր, ուստի ըստ Տէր-Մկրտչեանի Անձեւացու ձեռնադրութիւնն ընկնում է 941-949թթ. միջեւ, հետեւաբար, այդ տարեթուերի միջեւ է ընկնում նաեւ Նարեկացու ծննդեան քուականը(15):

Մ. Արեղեանն ընդունում է Տէր-Մկրտչեանի այս վարկածը: «940 թուից շատ առաջ չի կարելի դնել Գրիգորի ծնունդը - գրում է Արեղեանը - որովհետեւ

Ողբերգութեան մատեանի մէջ ինքն իրեն 1001-1003 թթ. թելադրուած հասակն առած, բայց ծեր չի համարում»: Հետեւաբար, ըստ Արեղեանի, Նարեկացին պէտք է ծնուած լինի «940ական քուականներին, աւելի շուտ՝ այդ քուականների երկրորդ հնգամեակին»(16):

Մ. Մկրեանը հաւաստի է համարում Նարեկացու ծննդեան եւ մահուան աւանդական տարեթուերը. «Նարեկացին ծնուել է 951 քուականին, վախճանուել է 1003 քուականին»(17): Մկրեանին համոզիչ չեն թւում ոչ Տէր-Մկրտչեանի եւ ոչ էլ Արեղեանի առաջարկած մօտաւոր տարեթուերը: «Նախ՝ ըստ Օրմանեանի, Ամանիան կաթողիկոս է դարձել ոչ թէ 941թ. այլ 946 թ.- գրում է նա - այնուհետեւ՝ թելադրու 950թ. գրուած Պատարագի խորհրդի յիշատակարանում Խոսրովը եպիսկոպոս է յիշուում, բայց դա բոլորովին էլ չի ապացուցում, թէ 950 թուին նա անպայման եպիսկոպոս էր, որովհետեւ յիշատակարանը 950թ. չի գրուած, այլ յետագայում, երբ Խոսրովը կարող էր արդէն եպիսկոպոս դարձած լինել»(18):

Ճիշտ է, որ Օրմանեանը Ամանիա Մոկացու կաթողիկոսութեան տարիները դնում է 946-968թ.(19): Բայց Օրմանեանը սխալում է, եւ իրաւացի է Գ. Տէր-Մկրտչեանը: Յայտնի է, որ Մոկացին Անձեւացուն մեղադրել է աղանդաւորութեան մէջ: Իր թղթերից մէկում նա գրել է. «Ի ՆԳ / 403+551=954 - Ա. Ղ. / քուականիս եւ ԴԺ-ան / 14 / ամի մերոյ դիտապետութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձեւացեացն, այր համեստ եւ գիտնաւոր եւ այեօք ծերութեամբ զարգացեալ»(20): Պարզ է, որ Ամանիան 941թ. կաթողիկոս էր: Մկրեանի առարկութիւնը կորցնում է իր ուժը:

Քննադատութեան չի դիմանում նաեւ Մկրեանի այն փաստարկը, թէ Պատարագի խորհրդի մեկնութիւնը, եթէ անգամ գրուել է 950թ., ապա դա չի նշանակում, թէ Անձեւացին այդ թուին անպայման եպիսկոպոս էր: Հաւաստի է սակայն, որ Անձեւացին իր մեկնութիւնը գրել է եպիսկոպոս դառնալուց յետոյ եւ, ինչպէս ինքն է ասում, գրել է եկեղեցու խախտուած կարգերը վերականգնելու համար. «Համարձակեցայ առ այս յանդգնաբար ի հարկէ, ոչ զի անձին փառս ստացայ, այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ»(21):

Այսպիսով, Գրիգոր Նարեկացու ծննդեան հաւանական տարեթիւը մնում է շուրջ 945 թուականը:

Յայտնի չէ նաեւ Նարեկացու ծննդավայրը: Հաւանական է համարուում, որ նա ծնուել է Վասպուրականի Ռշտունիք գաւառի Նարեկ գիւղում: Հաւաստի է սակայն, որ վաղ մանկութիւնից Նարեկացին իր անդրանիկ եղբոր՝ Յովհաննէսի հետ ուսանել է Նարեկավանքում, որի առաջնորդն էր, ինչպէս ասուեց, Անանիա Նարեկացին՝ Գրիգոր Նարեկացու մօր հօրեղբայրը: Այստեղ էլ նա ստացել է ժամանակի համար փայլուն կրթութիւն, ձեռնադրուել է նախ քան հայ եւ ապա վարդապետ, զբաղուել է գրական գործունէութեամբ, մանկավարժութեամբ, գրչութեամբ: Նարեկացին բազմաշնորհ անհատականութիւն էր եւ ճանաչուած հեղինակութիւն: «Հրաշալի էր եւ յաստուածաբանական վարդապետութեան եւ յատենախօս քաղաքութեան, պերճ եւ առատ բանիւք եւ քաղցրաբոլոյ շրթամբք, նոյն եւ յաջողակ ի գիր եւ զօրաւոր, որով զարմացուցանէր զմերձաւորս եւ զհեռաւորս, եւ քաղաքեալ լինէր համբաւ սրբութեան եւ իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհս Հայոց առաջի քաղաւորաց եւ կաթողիկոսաց ժամանակին»(22), կարդում ենք նրա թեո

վարքի խմբագրութիւններից մէկում: «Նարեկացին՝ գրել է երաժշտագէտ Ն. Թահմիզեանը՝ իր տաղերը ինքն է յղացել որպէս երաժշտական քանաստեղծական ստեղծագործութիւններ»(23):

Նարեկացին եղել է բուն ընթերցասէր. «Յարաժամ դեգերիմ յըննուլն»(24), գրել է ինքը: Իմացե՞լ է արդեօք օտար լեզուներ: Այս մասին չկայ ուղղակի վկայութիւն: Բայց չպէտք է տարակուսել, որ նա տիրապետել է գոնէ Յունարէնին: Հաւաստի է, որ Յունարէն իմացել են Խոսրով Անձեւացին, Անանիա Նարեկացին եւ Նարեկավանքի այլ վանականներ: 10-րդ դարի կրօնաւորներից շատերը հայրենադարձուել էին Բիւզանդիայից: Ռոմանոս Լեկապենոս կայսրը /920-944/ իր գահակալութեան առաջին իսկ տարիներից, «հալածեաց զամենայն կրօնաւորս եւ զգահանայս հայոց - գրում է Կիրակոս Գանձակեցին - որք էին յաշխարհին Հռոմոց, զի ոչ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի»(25): Սրանք էլ հիմնադրում են Կամբջաճորի եւ Կապուտբարի վանքերը Արշարունիքում, Հռոմոց վանքը եւ Դպրեվանքը Շիրակում, եւ այլն: Նարեկավանքը եւս կառուցուել է այդ ժամանակ: Շուտով այստեղ են շտապում «եւս եւ ուսելոց ոմանց յաշխարհին Յունաց եւ վարժելոց յիմաստս փիլիսոփայութեան, յորոց միջի անուանի երեւեցաւ Անանիա վարդապետ փիլիսոփայ հօր»(26): Նշանակում է՝ Նարեկավանքի միաբաններից ոմանք կրթութիւն էին ստացել Բիւզանդիայում: Եւ առհասարակ «Նարեկավանքը քարի դրացիական յարաբերութիւններ է ունեցել Բիւզանդական եկեղեցու հետ»(27): Գրական-մշակութային սերտ կապերը ենթադրում են նաեւ լեզուի իմացութիւն: «Ինձ համար որոշակի է, որ Նարեկացին իմացել է Յունարէն»(28), - գրել է Ժ. Մսերեանը: Եւս եւս ընդունում ենք այս կարծիքը:

Նարեկացին եղբայրական ընկուշ սիրով է կապուած եղել Յովհաննէս Նարեկացու հետ: Գրիգորը խոնարհ մեծարանքով է խօսում նրա մասին, իրեն եւ նրան համարելով իբրեւ մէկ բանական մարմին «ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք, միակրանք, համապատիւք, գուգահաւանք, ի քառից աչաց առ մի եւ նոյն շաւիղ խորհրդոյ տեսնալք»(29): Մէկ այլ յիշատակարանում նա խնդրում է յիշել իրեն եւ «գեղբայրն իմ զանդրանիկ Յովհաննէս ցանկալի անուն ի մերում կարգի, որ գիտնականն է եւ հանճարեղ իմաստասէր, քան զիս առաւել յամենայնի»(30): Անանիայի մահից յետոյ Յովհաննէսը ստանձնել է Նարեկավանքի առաջնորդի պաշտօնը: Ըստ էութեան նա եղել է Նարեկացու առաջին գրաքննադատն ու խորհրդատուն, թերեւս նաեւ առաջին գրիչն ու խմբագիրը:

Նարեկացու թուակիր առաջին երկը՝ Երգ Երգոցի մեկնութիւնը, գրուած է 977թ., վերջինը՝ Մատեանը, աւարտել է 1002թ.: Ստոյգ տարեթուերի այս սահմանագիծն ընդգրկում է ստեղծագործական կեանքի ուղիղ քառորդ դար:

Վիճելի է նաեւ Գրիգոր Նարեկացու մահուան թուականը: Սովորաբար այդ տարեթիւը դնում են 1003-1010թթ. միջեւ՝ Նարեկացու կեանքի տեւողութիւնը հաշուելով 50-60 տարի: Լամբրոնացին տարեթիւ չի նշել. «չեւ եւս կատարեալ զընթացս աստի կենացս - գրել է նա - այլ երիտասարդական աստիս վախճանեալ»(31): Վարքի յայսմաւորքային տարեբրակն ունի մահուան որոշակի տարեթիւ՝ 1003/ ՄՄ, ձեռ. 1511, էջ 349ր/:

«Բայց չեւ եւս կատարեալ զընթացս աստի կենացս, այլ երիտասարդական տիս վախճանեալ ի թուականիս մերում ԴՃԾԲ /452+551=1003/ ամին»(32) - ասուած է տպագիր Յայսմաւորքում: Նարեկացու

լիակատար վարքում նշուած է նաեւ մահուան օրը. «յամի տեառն 1003 եւ ի թուին Հայոց ՆԾԲ, ի մեհեկի ԻԱ /21/, որ յայն ժամանակս հոկտեմբերի 6 կամ ըստ Յայսմաւորաց՝ փետրուրի 27, ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի»(33):

Այս թուականը յայտնի է նաեւ մի քանի ժամանակագրութիւններէ. «թուականին ՆԾԲ /1003/ վախճանեալ Գրիգոր Նարեկացին»(34): «...թվին Հայոց ՆԾԱ /1002/ փայլէր իբրեւ զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին, որդի Խոսրովու Անձնացեաց եպիսկոպոսին. եւ յայսմ ամի աւարտեաց գեղեկեցոյց քանս իւր, զոր այժմ ունի եկեղեցի սուրբ. եւ ոմանք ասեն, թէ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս աստուած»(35):

Ասացի, որ Նալեանը Նարեկացու կեանքի տեւողութիւնը համարել է 30 կամ 33 տարի: «Ամենայն որ սիրէ զիր ինչ - գրում է նա - փութով ընթանայ եւ արագ ժամանէ. իսկ սուրբս Գրիգոր՝ ըստ ամաց փրկչին ԼԳ /33/ - ամեայ ննջեաց» «ի ԴՃԾԳ /1004/ ամին՝ յաւարտման աղօթից գրոյս»(36): Աւետիքեանը Նարեկացու մահուան տարեթիւ չի նշել. «Լիներ Գրիգոր աւելի զվաթսմամեայ ի յօրինել աղօթիցն»(37): Նարեկացուն վաթսուամեայ են համարել Գ. Զարքիանալեանը, Թ. Գուշակեանը եւ ուրիշներ: Արեղեանը Նարեկացու տարիքի եւ մահուան այդ թուերը համարում է ենթադրական(38): Մ. Օրմանեանը Նարեկացու մահուան թուականը համարում է 1003 թիւը: Յայսմաւորքում նշուած մահուան օրը՝ մեհեկի 21, ըստ Օրմանեանի տոմարական հաշուարկի, համապատասխանում է Հոկտեմբերի 7ին: Ըստ Օրմանեանի՝ Նարեկացին մահացել է 1003թ. Հոկտեմբերի 7ին(39): Ըստ իս՝ սա պէտք է համարել ստոյգ:

Նարեկացու անիւնն ամփոփուել է Նարեկավանքում՝ Սանդուխտ կոյսի

եկեղեցու մօտ: 1021թ. վասպուրականի Սենեֆերիմ Արծրունի թագաւորը իր տիրոյթները տուեց Բիւզանդիայի կոստանդին կայսրին եւ փոխարէնը ստացաւ Սերաստիան: Վասպուրականից գաղթեցին շուրջ չորս հարիւր հազար հոգի: «Ի չուել Սենեֆերիմայ - գրում է Մ. Զամչեանը - քազում կրօնաւորք եւս գնացին ընդ մաւ. ընդ որս եւ քազում ի միաքանից Նարեկայ վանիցն, առեալ ընդ իւրեանս զմարմին սրբոյն Գրիգորի Նարեկացոյ. եւ շինեցին սոքա անդ վանս մօտ Ակնայ, զոր եւ կոչեցին Նարեկ. եւ անդ հանգուցին զմարմին սրբոյն»(40): Ըստ երեւոյթին, խօսքը վերաբերում է մասունքներ տեղափոխելուն:

Նարեկացու գերեզմանը եղել է սրբատեղի: Հայերը դարեր շարունակ ուխտի են գնացել նրա շիրիմին: «Նարեկացիի շիրիմը - գրել է մի ուխտաւոր - մինչեւ 1867 թ. ունեցել է միայն անյիշատակագիր եւ պարզ ու անպաճառ քար մը: Բայց նոյն թուին Նարեկայ վանքի վանահայրը, Յովսէփ վարդապետ, շինել կու տայ մարմարեայ շիրմաքար մը, որու սնար քարին քարձրաբանականութիւնը է Նարեկացու տեսիլը՝ Աստուածածինն Յիսուս գիրկը, իսկ Նարեկացին վեղարաւոր եւ փիլոնով ծունկի եկած անոր առջեւ՝ կ'երկրպագէ»(41): Շիրմաքարին եղել է տապանագիր: Ակնարկագիրը այնուհետեւ հաւաստում է, թէ աւերակ ու ամայի են այժմ Նարեկայ վանքն ու Նարեկ գիւղը: Աւերակ ու ամայի: Գուցէ այլեւս չկայ նաեւ Նարեկացու շիրմաքարը, չկայ նաեւ շիրիմը: Այնտեղ եղեռն է եղել, գլխատուել է մի հին ու ազնիւ ժողովուրդ: Բայց քանի դեռ կայ մի հայ՝ Նարեկացու հանճարի ոգին կենդանի է նրա մէջ: Նրա խօսքը պիտի մնայ յավերժ՝ իբրեւ «Արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի»/Բան կը, ա/, ինչպէս մարգարէաբար ասել է ինքը:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ յայտնի չէ Նարեկացու ծննդեան ստոյգ տարեթիւը: Ենթադրում է, որ նա ծնուել է շուրջ 945 թուականին: Նարեկացու հայրը եղել է յայտնի մատենագիր եւ եպիսկոպոս Խոսրով Անճեւացին: Նարեկացին ունեցել է երկու եղբայր՝ Յովհաննէսը եւ Սահակը: Գրիգորը եղել է ընտանիքի կրտսերը: Նարեկացու մայրը մահացել է երիտասարդ: Յայտնի չէ նրա անունը: Հաւանական է համարում, որ Նարեկացին ծնուել է Վասպուրական աշխարհի Ռշտունիք գաւառի Նարեկ գիւղում, եւ ստոյգ է, որ նա ուսանել է Նարեկավանքի դպրոցում՝ վանքի հիմնադիր եւ առաջնորդ Անանիա Նարեկացու մօտ, որն իր մօր հօրեղբայրն էր: Նարեկացու անդրանիկ եղբայր Յովհաննէսը եղել է Գրիգորի ուսումնակիցը: Ուսումնաւարտելուց յետոյ Նարեկացին ձեռնադրուել է նախ քանահայ եւ ապա վարդապետ: Նարեկացին ապրել եւ ստեղծագործել է Նարեկավանքում: Նա թողել է գրական հարուստ ժառանգութիւն: Նարեկացու թուակիր առաջին գործը երգ երգոցի մեկնութիւնն է՝ գրուած 977 թ., վերջինը՝ Մատեանը, որն աւարտել է 1002 թուականին: Գրիգոր Նարեկացին մահացել է 1003 թուականի Հոկտեմբերի 7ին:

ԱՂԻՏԻՄՆԵՐ՝ ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տե՛ս՝ Ա. Ղանալանեան, Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 306-320:
2. Նոյն տեղում, էջ 30Ա:
3. Նոյն տեղում, էջ 30Բ:
4. Գրիգոր Նարեկացի. Մատեան Ողբերգութեան. աշխատասիրութեամբ Պ. Մ. Խաչատրեանի եւ Ա.Ա. Ղազինեանի, Երեւան, 1985 էջ 171 (այսուհետեւ Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան):
5. Դեռեւս Ներսէս Լամբրոնացու կենդանութեան

Ժամանակ՝ 1190 թ. Սամուել Սկեռացին, ընդօրինակելով նրա «Մեկնութիւն Սաղմոսաց» երկը, հեղինակի մասին գրել է այսպէս. «Վոք-իմ թողի ձեզ զպատմութիւն կենաց սորին քննողի ովմ եւ ուստն եւ զհարդմ, որպէս եւ մեծ այսաւր ունիմք զբազում հարց մերոց եւ վարդապետաց, այսինքն՝ զԴաւիթ Ներգիմեցի եւ զԴրիգոր Նարեկացի եւ զՄովսէս Խորենացի եւ զայլս, որոց ի քանիցս պարարտութենէ զուարճանամք եւ զհարդ կենաց եւ վարուց փափագելով գիտել՝ ոչ ունիմք եւ ոչ մի բան վասն երանելեացն պատմութիւն» / Դարեգին Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա., Ամբիլիաս, 1951, էջ 549 /:

6. Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, էջ 172-174:

7. Գիրք որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ԳՃՂԳ-ԳՃՂԴ:

8. Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւն սրբոց, հ. Ե. Վենետիկ, 1813, էջ 321-329:

9. Յ. Նալեան, Գիրք Մեկնութեան Աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 3:

10. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ. Վենետիկ, 1785, էջ 852:

11. Նոյն տեղում, էջ 839:

12. Նոյն տեղում, էջ 857:

13. Տես՝ Նարեկ Աղօթից. համառոտ եւ զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նորին տեառն Հ. Գաբրիէլի Աւետիքեան աթոռակալ վարդապետի, Վենետիկ, 1827, էջ 543-544, / այսուհետեւ՝ Նարեկ-լուծ /:

14. «Արարատ», 1897, էջ 91:

15. Նոյն տեղում, էջ 92:

16. Մ. Արեղեան, հ. Գ., էջ 576:

17. Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» պոեմը / տես՝ Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, գրաքարից թարգմանեց Մ. Խերանեան, Երեւան, 1960, էջ Գ /:

18. Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, Երեւան, 1955, էջ 114:

19. Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա., Կ. Պոլիս, 1912, էջ 1085:

20. «Արարատ», 1897, էջ 275:

21. Խոսրովու Ամձեւացեաց Եպիսկոպոսի Մեկնութիւն Սրբոյ Պատարագին, Վենետիկ, 1869, էջ 66-67:

22. Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւն սրբոց, հ. Ե. էջ 322-323:

23. Ն. Թահմիզեան, Կոմիտասը եւ Նարեկացու տաղերը, Բանբեր Երեւանի Համալսարանի, Երեւան, 1969, նո. 3, էջ 48:

24. Գրիգոր Նարեկացի Մատեանագրութիւնք, էջ 423:

25. Կիրակոս Գամձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան 1961, էջ 84:

26. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ. էջ 824:

27. Gre'goire de Narek, Le Livre de Pre'res, introduction, traduction de l'armenien et notes par I. Ke'chichian, Paris, 1961. p. 34.

28. Նոյն տեղում, էջ 24:

29. Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, էջ 642:

30. Գրիգոր Նարեկացի, Մատեանագրութիւնք, էջ 422:

31. Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, էջ 170:

32. Գիրք որ կոչի Այսմաւուրք, էջ ԳՃՂԴ:

33. Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Ե. էջ 327-328:

34. Մամր ժամանակագրութիւններ, 13-18րդ դդ., հ. Ա. կազմեց Վ. Ա. Յակոբեան, Երեւան, 1951, էջ 208:

35. Մամր ժամանակագրութիւններ, 13-18րդ դդ., հ. Բ. կազմեց Վ. Ա. Յակոբեան, Երեւան, 1956, էջ 338:

36. Յ. Նալեան, Մեկնութիւն աղօթից, էջ 742:

37. Նարեկլուծ, էջ 544:

38. Մ. Արեղեան, Երկեր, հ. Գ. էջ 580:

39. Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա. էջ 1181:

40. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ. էջ 903:

41. «Արարատ», 1918, Ա-Գ, էջ 145:

(շարունակելի)